

ԿԱՄԲԱՍՏԱՆԵ՛Մ ՍՓՅՈՒՌԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Posted on May 14, 2018 by Keghart



Category: [Opinions](#)



Գևորգ Յազըճեան, Պատմաբան, [Անայիտիկոն](#), Ստեփանակերտ, 10 Ապրիլ 2018

Շարունակելով սովետական գործելակերպը՝ ՀՀ ղեկավարությունն առաջին իսկ օրից փորձեց իրեն ենթարկել սփյուռքը, հատկապես նրա ավանդական հատվածը, որը կազմավորվել էր հիմնականում Հայոց ցեղասպանության հետեւանքով: Գործի դրվեց մահակի եւ քաղցրաբլիթի ավանդական տեխնոլոգիան:



Եթե առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը ՀՅԴ-ի նկատմամբ կոշտ քաղաքականությամբ չկարողացավ չեզոքացնել սփյուռքի կուսակցական հատվածի մի մեծ մասին (իրեն չօգնեց նույնիսկ Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսի «ներմուծումը»), ապա Ռոբերտ Քոչարյանի ու մանավանդ Սերժ Սարգսյանի նախագահության 10 + 10 տարիներին ավանդական սփյուռքը գնալով ավելի ու ավելի կառավարելի եւ յուրային դարձվեց: Տնտեսական մենաշնորհներ տալով, շքանշան-մեդալներ աներեւակայելի առատությամբ աջ ու ձախ շնորհելով եւ այլ մեթոդների կիրառությամբ սկզբում չեզոքացվեցին, այնուհետեւ գրպանային դարձվեցին այնպիսի համահայկական եւ ազդեցիկ կառույցներ, ինչպիսին են ՀՅԴ-ն, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ), Ամերիկայի հայկական համագումարը (ԱՀՀ)...

Գևորգ Յազըճեան, Պատմաբան, [Անայիտիկոն](#), Ստեփանակերտ, 10 Ապրիլ 2018

Շարունակելով սովետական գործելակերպը՝ ՀՀ ղեկավարությունն առաջին իսկ օրից փորձեց իրեն ենթարկել սփյուռքը, հատկապես նրա ավանդական հատվածը, որը կազմավորվել էր հիմնականում Հայոց ցեղասպանության հետեւանքով: Գործի դրվեց մահակի եւ քաղցրաբլիթի ավանդական տեխնոլոգիան:



Եթե առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը ՀՅԴ-ի նկատմամբ կոշտ քաղաքականությամբ չկարողացավ չեզոքացնել սփյուռքի կուսակցական հատվածի մի մեծ մասին (իրեն չօգնեց նույնիսկ Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսի «ներմուծումը»), ապա Ռոբերտ Քոչարյանի ու մանավանդ Սերժ Սարգսյանի նախագահության 10 + 10 տարիներին ավանդական սփյուռքը գնալով ավելի ու ավելի կառավարելի եւ յուրային դարձվեց: Տնտեսական մենաշնորհներ տալով, շքանշան-մեդալներ աներեւակայելի առատությամբ աջ ու ձախ շնորհելով եւ այլ մեթոդների կիրառությամբ սկզբում չեզոքացվեցին, այնուհետեւ գրպանային դարձվեցին այնպիսի համահայկական եւ ազդեցիկ կառույցներ, ինչպիսին են ՀՅԴ-ն, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ), Ամերիկայի հայկական համագումարը (ԱՀՀ)...

Սրանց հետեւեցին նաեւ ավանդական մյուս՝ Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան եւ Ռամկավար ազատական կուսակցությունները: Սերժ Սարգսյանն իր թիմի կարկառուն

դեմքերի (առաջին հերթին՝ ՀՀ սփյուռքի «անփոխարինելի» նախարար Հրանուշ Հակոբյանի) աջակցությամբ վերջիններս պառակտեց: Հաջողությունը ամրապնդվեց, երբ ՌԱԿ-ի՝ ՀՀ իշխանությունների նկատմամբ քիչ-շատ ընդդիմադիր հատվածը վերջերս ամբողջովին սերժահպատակ դարձավ՝ փորձելով ՀՀ իշխանություններին հաճոյանալով չեզոքացնել իրեն հակառակորդ խմբավորմանը, որն սկզբից եւեթ իր անվերապահ հավատարմությունը հայտնել էր ՀՀ իշխանություններին: Հակոբ Ավետիքյան-Երվանդ Ազատյան զույգի ղեկավարած առաջին թեմն ընդհարվեց Հունաստանում ՀՀ դեսպան Ֆադեյ Չարչոյյանի հետ, ում հրապարակայնորեն խիստ քննադատելուց հաշված շաբաթներ անց նույն մամուլով ոչ միայն ... ներողություն խնդրեց դեսպանից, այլև շտապեց ընտրված նախագահ Արմեն Սարգսյանին շնորհավորել իբրև նախագահի (առ ոչինչ համարելով ՀՀ սահմանադրությամբ ամրագրված՝ երդման պարտադիր պահանջը): Այս կտրուկ շրջադարձի համար չուշացավ պարզեւատրումը՝ այս թեմի Գերագույն խորհրդի նախագահ Վարդան Նազիրեանը Սերժ Սարգսյանի ձեռքից վերջերս ստացավ «Երախտագիտության մեդալ»՝ Աստված գիտի մատուցած ի՛նչ ծառայությունների համար...

Ժողովրդավարություն քարոզող այս կուսակցության հակընդդեմ հատվածի (որը նույնիսկ գրանցված չէ ՀՀ-ում) Կենտրոնական վարչության փոխատենապետ, Հալեայից Երեւան տեղափոխված Լեւոն Բըլըխյանը անցյալ տարվա գարնանը կայացած մամուլի ասուլիսում նույնիսկ հայտարարեց, թե իրենց բոլոր քայլերը կատարում են Հրանուշ Հակոբյանի հետ խորհրդակցելուց հետո... Ժողովրդավար երկրում նման հայտարարությունը քաղաքական փոթորիկ կառաջացնեք, առնվազն՝ հիշյալ տիկինը կազատվեր պաշտոնից, մինչդեռ ՀՀ-ում այն անցավ աննկատ...

Նույն ԿՎ ատենադպիր եւ Բեյրութի «Չարթօնք» օրաթերթի խմբագիր Սեւակ Հակոբյանը թերթի ս. թ. հունվարի 22-ի խմբագրականը նվիրել էր ՀՀ նախագահի պաշտոնում Արմեն Սարգսյանի առաջադրմանը ՀՀԿ-ի կողմից: «Սերժ Սարգսեան Չըսաւ. «Ինձմէ Ետը Ջրիեղեղ» վերնագրված խմբագրականում Հակոբյանը գովերգում է Սարգսյանի իմաստությունը՝ այս ընտրությունը հայտարարելով նրա «մեծահոգի եւ պատասխանատու մտեցման» դրսեւորում, ու ավելացնում. «Ղեկավարի մը լաւագոյն արժանիքը իր յաջորդը պատրաստելուն կամ առաջադրելուն մէջ կը կայանայ եւ ոչ թէ հաւանական եւ կարողական (potential) ուժերը ճգմելուն, մեկուսացնելուն կամ վարկաբեկելուն մէջ»: Հիշեցնենք. այս տողերը տպագրվում էին այն օրերին, երբ Երեւանում ընթանում էին այդ կարողական ղեկավարներից շատերի խեղկատակ դատավարությունները...

Հասկանալի է, որ նման ստեր տարածող մամուլը կա՛մ ամբողջովին չէր անդրադառնալու ՀՀ-ում ապօրինություններին, համատարած փչացածության աղաղակող փաստերին ու իշխանական վակխանալիայի ամենատարբեր դրսեւորումներին, կա՛մ ընդհակառակը՝ գովերգելու էր այս նույն իշխանության «անգո»

Նվաճումները արտաքին քաղաքականության, տնտեսության, սոցիալական եւ այլ ոլորտներում: Եթե ավելացնենք, որ անցյալ տարվա աշնանից «Չարթունքի» լրատվական գործընկերներն են ՀՀ հեռուստատարվածությունն ու «Արմենպրեսը»՝ պատկերն ամբողջական կդառնա...

ՄԴ Հնչակյան կուսակցության մամուլը ավելի օվկիանոսում դեկը կորցրած նավակի տպավորություն է թողնում. հակասական բնութագրումներով հրապարակումները հաջորդում են իրար, երբեմն էլ տպագրվում թերթերի ...միեւնույն համարի միեւնույն էջում: Եթե ԵՊՀ պատմության ֆակուլտետի շրջանավարտ Ավետիս Ռազմիկը (Փոշոլյան) խստորեն քննադատում է ՀՀ եւ ԱՀ իշխանական շրջանակներում առկա բացասական երեւույթները, ՀՀ պաշտոնական աղբյուրներից (ՀՀ սփյուռքի նախարարության «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերական, «Արմենպրես», ՀՀ նախագահի, կառավարության, ԱԺ, նախարարությունների եւ այլ գերատեսչությունների կայքեր) վերցրած լրատվությունը միմիայն վարդագույն է: Օրինակ, Կանադայում լույս տեսնող, ՄԴՀԿ պաշտոնաթերթ «Լուսաբաց» ամսաթերթի 2017թ. սեպտեմբերի 16-ի համարում կային այնպիսի հրապարակումներ, որոնք ինձ ստիպեցին նամակ հղել խմբագրությանը, որից մեջբերեմ հետեւյալ հատվածը.

«Իրարու ետեւէ կարդացի ՀՀ + Արցախի Հանրապետության մէջ ՉԱՅԱՑՈՒՆՑ թիւերով աճերու մասին տեղեկութիւններ. ՀՀ-ի օդանաւակայաններու ուղեւորահոսքը աճած է 25.4 տոկոսով, Արցախ այցելողներուն թիւը՝ 46 տոկոսով, տեղեկատուական արհեստագիտութիւնը՝ 38.2 տոկոսով, քոնեաքի արտադրութիւնը՝ 71.1 տոկոսով, գինիինը՝ 30 տոկոսով, ծիրանի արտածումը արձանագրած է ԱՆՆԱԽԱԴԵՊ ԱՃ, աշխատոյժի պահանջարկը ԲԱՐՁՐԱՑԱԾ Է: Է՛հ, այսքանն իսկ բաւարար պիտի ըլլար, որ տնտեսագիտութենէն բան մըն իսկ չհասկցող անձ մը եզրակացներ, թէ այսպիսի ցուցանիշներ (երկնիշ թիւեր, այն ալ՝ ամենաքիչը 25.4 տոկոս, մաշալլա՛հ (արաբերէն բառ՝ աչքով չտալու իմաստով - Գ. Յ.) արձանագրող երկիրի մը ժողովուրդը պէտք է բարեկեցիկ կեանք ունենար: Մինչդեռ բոլորս ալ գիտենք, թէ ոչ միայն աղքատութիւնը չի նուազիր մեր հայրենիքին մէջ, այլեւ՝ ան ալ կ'աճի, նոյնպէս կ'աճի հայրենալքողներուն թիւը, ինչպէս դուք ալ գրած էք՝ Սարգսյանի չ-նախագահութեան 9 տարիներուն՝ առնուազն ԹԱՌՈՐԴ ՄԻԼԻՈՆ ՀԱՅ: Ինչո՞ւ չէք վերլուծեր այս հակասականութիւնը, ինչէ՞ն կը զգուշանաք կամ կը խուսափիք: Թէ ոչ «Լուսաբաց»-ի խմբագրութիւնն ալ յոյս ունի իր ԼՈՒԻԹԵԱՆ դիմաց արժանանալ անարժէք մետալ-շքանշան-պատուոգիրներուն՝ «Արարատ»-ի (ՄԴՀԿ Լիբանանի պաշտոնաթերթ - Գ. Յ.) խմբագիր տիկին Անի Եփրեմեանի եւ հայկական մամուլի շատ ու շատ պատասխանատուներու հանգոյն»:

Բարոյականության տեսակետից ամենից դժվարն ու ողբերգականը ՀՅԴ մամուլինն է: Վերջին 20 տարիներից շուրջ 15-ին մասնակից լինելով իշխանության, այսինքն՝ կրելով ԹԱՂԱԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅՈՒՆ ՀՀ+ԱՀ-ում ամեն արվածի եւ չարվածի համար, ՀՅԴ-ն ու նրա մամուլը փորձում են խուսափել հստակ դիրքորոշում արտահայտելուց

հայրենական երկու պետություններում առկա հարցերի, մանավանդ՝ սփյուռքահայությանն անչափ հուզող եւ 1988-ի դեկտեմբերյան աղետի զոհերի ՎԱԹՍՈՒՆԱՊԱՏԻԿԻ (մի պահ պատկերացրեք ահավորության աստիճանը) չափով արտագաղթի փաստի համար: Բերենք մի քանի օրինակ Լիբանանում ՀՅԴ պաշտոնաթերթ «Ազդակ» օրաթերթի վերջին ամիսների համարներից:

Մի քանի հրապարակումներում խստորեն քննադատվում է Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի ապրած՝ Երեւանի Հանրապետության հրապարակից ընդամենը 100 մետր հեռու գտնվող բնակարանի պարզած խայտառակ վիճակը (աղբանոց եւ ... զուգարան): Սակայն այդ բոլոր հրապարակումներում հեռավոր ակնարկ իսկ չկա այդ ամոթալի վիճակի համար ՀՅԴ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ մասին՝ կարծեք այդ վիճակը ստեղծողները կամ ՊԱՀՊԱՆՈՂՆԵՐՆ այլմոլորակայիններ լինեն, կամ էլ Դաշնակցության նկատմամբ անբարյացակամներ՝ կոմունիստներ, ՀՀԾ-ականներ եւ այլք:

«Ազդակի» 2017թ. փետրվարի 28-ի համարի 4-րդ էջում տպագրվել է երկար ժամանակ երեւանում ապրած, հայրենական իրողություններին լավատեղյակ Հովհաննես Զեքիջյանի «Ահազանգ՝ կազմակերպուած արտագաղթի մը» վերնագրված հրապարակումը: Հոդվածագիրը ցավով նշում է, որ ՀՀ անկախության վերահռչակումից առ այսօր «հայահաւաքի եւ հայրենադարձութեան պետական համապարփակ ծրագիր եւ ռազմավարութիւն չէ մշակուած»: Շահ տ ճիշտ է ասված: Քիչ ետք նա շարունակում է, որ այս փաստը հետեւանքն է «իրերայաջորդ իշխանութիւններուն եսակեդրոն, անհեռատես ու ապագային՝ վտանգաւոր ու հայրենակործան քաղաքականութեան»: Անշուշտ, ո՛չ հոդվածագիրը, ո՛չ էլ թերթի խմբագրությունն ընթերցողներին չեն հուշում, թե քառորդ դարից ավելի կյանք ունեցող ՀՀ-ի տարիների կեսից ավելին ՀՅԴ-ն գտնվել է իշխանության մեջ ու վարել, իրենց իսկ ակամա խոստովանությամբ՝ «եսակեդրոն, անհեռատես ու ապագային՝ վտանգաւոր ու հայրենակործան քաղաքականություն»:

«Ազդակի» մշտական հրապարակագիրներից Սեդո Բոյաջյանը թերթի 2017թ. հուլիսի 24-ի համարի 4-րդ էջում լույս տեսած գրության մեջ քննադատում է ՀՀ իշխանական համակարգում դաշնակցական պաշտոնյաներին փչացածությամբ ամբաստանողներին, հայտարարելով, թե «ԼԱՓԵԼԻՔ ՈՉԻՆՉ ԿԱՐ, ՈՐՊԵՍՉԻ ԼԱՓՈՑ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱՐ»: Սույն պարունը պետք է մի պահ ինքն իրեն հարց տա, թե դաշնակցական ներկա կամ երբեմնի նախարարներ Դավիթ Լոքյանը, Լեւոն Մկրտչյանը, Աղվան Վարդանյանը (որոնք որոշ ժամանակ նաեւ ՀՅԴ Բյուրոյի անդամ են եղել) ի՞նչ միջոցներով են կառուցել իրենց առանձնատները, ռեստորանները, սաունաները եւ այլ օբյեկտները:

Ճիշտ է ասված՝ մախաթը պարկում չես կարող պահել, եւ ՀՅԴ մամուլն ստիպված է երբեմն խիստ բնութագրումներ տալ ՀՀ իշխանություններին, սակայն առանց դրանք ուղեկցելու որոշակի անուններով, ոչ էլ դույզն ինքնաքննադատությամբ: Ըստ այդ

մամուլի՝ ՀՀ-ում, իրոք, կան բացասական երեւոյթներ, որոնք կան նաեւ աշխարհի գրեթէ բոլոր երկրներում, եւ ՀՅԴ-ն մասնակցում է իշխանական կոալիցիաներին՝ այդ երեւոյթները իբր վերացնելու կամ գոնե նվազեցնելու համար: Սակայն այս նեյնիմներն արդէն վաղուց չեն գոհացնում դաշնակցական եւ համակիր շրջանակներին: Նրանցից շատերն այցելում են Հայրենիք եւ իրենց աչքերով տեսնում քաղաքաբնակների ու հատկապէս գյուղացիների ծանր կյանքը, փչացածութեան ահռելի չափերը, եւ սկսում են հաշիվ պահանջել կուսակցութեան ղեկավարութիւնից, ինչը լռեցվում է ամենատարբեր մեթոդներով, ընդհուպ ֆիզիկական բռնութեան կիրառումը (օրինակ՝ շարքային կուսակցական, Թուֆենքյան հիմնադրամի գործադիր տնօրէն Ռաֆֆի Տուտապյանի խոշտանգումը Լիբանանում՝ ՀՅԴ Շաղգոյան կենտրոնի անմիջական մերձակայքում ս.թ. փետրվարի 26-ին):

«Ազդակի» ս.թ. հունվարի 30-ի համարի 4-րդ էջում լույս տեսած եւ իր հոր՝ ՀՅԴ Բյուրոյի երբեմնի անդամ Բաբկէն Փափագյանի մասին իր հրապարակման մէջ Անի Աստուրյանը գրում է նաեւ նրա հեղինակած մի պիեսի մասին. ըստ Փափագյանի՝ սովետական վարչակարգը մարդկանց ստիպում էր դառնալ «գող, աւազակ, թալանչի, մատնիչ, նենգ, դաւաճան, վախկոտ, սուտասան, ստոր, ստրկամիտ, ծախու, անուղղելի դասալիք»։ Ընդամենը չորս տող ներքեւում Աստուրյանը հարց է տալիս. «Հապա ի՞նչ պիտի ըսեր (Բաբկէն Փափագյանը – Գ. Յ.) այսօր, եթէ տեսներ, որ հայրենիքին մէջ կը տիրեն Նոյնանման ածականներու տեր իշխանաւորներ ու մարդիկ»։ Ինչպէս ասում են՝ ի բերանոյ քումմէ դատեցար:

Սփյուռքահայ մամուլում իր անաչառութեամբ առանձնանում է Փարիզի «Նոր Յառաջ» թերթը: Այն միակն է, որ ոչ միայն հետեւողականորէն գրում է հայոց հայրենական պետութիւններում իշխանութիւնների փչացածութեան ու դրանից բխող երեւոյթների, այլեւ քաղաքական բանտարկյալների առկայութեան մասին ու մշտապէս տպագրում «Սասնա ծռեր» խմբին աջակցող «Հայկական վերածնունդ» նախաձեռնութեան ֆրանսիական մասնաճյուղի բողոքի ցույցերի եւ այլ քայլերի մասին: Կան եւս մի քանի էլեկտրոնային կայքեր՝ համանման բովանդակութեամբ:

Ընդհանուր վերցրած, ՀՀ իշխանութիւնները հաջողել են սփյուռքների, մասնավորաբար՝ ավանդական սփյուռքի կառույցների ղեկավարութիւնները լծել իրենց կառքին, ինչը նաեւ արտահայտվում է կրկեսային ցուցքերի վերածված Հայաստան-սփյուռք իրարահաջորդ համաժողովներում:

Սփյուռքյան կառույցների ղեկավարները, ՀՀ փչացած իշխանութիւններին իրենց ծափահարումներով կամ հայտնի ցուցապաստառի կապիկի՝ չտեսնել-չլսել-չխոսելու քաջածանոթ պահվածքով հանցակից են ՀՀ իշխանութիւնների հայրենաքանդութեան:

Նրանց կամբաստանե՛մ հայրենաքանդութեան հանցակցութեան, նաեւ սեփական ժողովրդին ՅԵՂԱՍՊԱՆԵԼՈՒ համար:

